բապետին, որ մի քանի վայրկեան կառքը կանգնեցնել տալով՝ օրհնեց ամենքին և գնացքը նոյն կարգով շարունակեց առաջ ընթանալ։ Գիւղին ելնելով Նորին Օծութիւնը դարձեալ կառքը կանգնեցնել տուաւ և օրհնեց Վաղարշապատից Իրան ձիով ուղեկցող քահանաներին և ժողովրդականներին, որոնք Փարաքարից յետ պիտի վերադառնային, և ապա շարունակեց իւր ճանապարհը դէպի Երևան։

—

ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ.

Դեկտեմբերի 23-ին Նորին Վեհափառութեան անունով հասած հեռագիրն հաղորդում է, որ Կ. Պոլսի Պատրիարք է ընտրուած Գերապատիւ Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեանը, որ և Կայսերական յատուկ իրադէով հաստատուած է։

Տաճկական Հայաստանում տեղի ունեցած գործերի մասին սպասելով պաշտօնական տեղեկութիւնների Կ. Պոլսի Արբաղան Պատրիարքից, առ այժմ «Արարատ»ը յառաջ չէ բերում այն բազմաթիւ անկարգութիւնների նկարագիրները, որոնցով լի են եւրոպական և տեղական լրագիրները։ «Արարատն» առանձին հրճուանքով արձանագրում է միայն այն փաստը, որ Եւրոպայի քրիստոնեաները պաշտպան են հանդիսանում հալածուած հայ քրիստոնեաներին։ Ինչպէս լրագիրներն հաղորդում են, առանձին եռանդ են ցոյց տալիս այդ խնդրում մանաւանդ Անգլիայի եկեղեցականներն առանց դաւանութեան խտրութեան, ինչպէս Կարդինալ Վոհանը, Քէնթըրբերիի արքեպիսկոպոսն և եկեղեցիների քարոզիչներն առհասարակ։

—

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ.

Ազգիս Վեհափառ Հայրապետն իւր Գահը բաղմելու օրուանից առաջին խնամք է ցոյց տուել Պարսկաստանի Հայոց վրայ։ Արարատականի համար թեմական առաջնորդ յղելուց յետոյ, Նորին Օծութիւնը յատուկ հովիւ ուղարկեց և Սպահանի հայերին, արժանապատիւ Սահակ վ. Այվազեանին, որպէս զի Գերապատիւ Եսայի Արքեպիսկոպոսը հնար ունենայ հեռաւոր Հնդկաստանի և Խաղաղական ովկիանոսի կղզիներում ցրուած հօտին այց գնալու և իմաստով մխիթարելու։

Արարատականի թեմում օտար քարոզչութեան առաջն առնելու և ընդարձակ դաւառներում ցրուած հայերին կենդանի խօսքով մխիթարելու և իրենց հայրենի եկեղեցուն հաւատարիմ մնալու յորդորելու համար յատուկ քարոզիչ նշանակեց Նորին Վեհափառութիւն, արժանապատիւ Յովսէփ վ. Սառաջեանին, Ամերիկայի հայերի նախկին առաջնորդին.

Թադէի առաքելոյ վանքի կողոպտման մասին տեղեկութիւններ ստանալով՝ Նորին Օծութիւնը ուղարկեց Նորընծայ Խաչիկ արեղային, որ վրահասու լինի եղելութիւններին և տեղեկագիր բերէ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

—

Պատուարժան խմբագրական յանձնաժողովոյն «Արարատ» ամսաթերթի։

Վանդի զրկեալ դատնէր պաշտօնական ամսաթերթն Մայր Աթոռոյս յուրոյն վարչութենէ յոչ սակաւ ամսոց հետէ, վասն որոյ վստահ յուսումնասիրական եռանդն հետևեալ անձանց պատշաճ վարկաք կազմել յանձնա-

ժողով իմն վարել զմամբագրութիւն «Արարատայ սահմանելն առ այս կարգաւ զՆիկողայոսն Քարամեան անուանեալք ընդհանուր խմբագիր, տալով նմին գործակից զՅովհաննէսն Յովհաննիսեան. կրօնական բաժնի լիցի պատասխանատու բարեշնորհ Կարապետ աբեղայն, իսկ Մինասն Բէրբէրեան վարեսցէ զընդհանուր անօրէնութիւն ամսաթերթին։

Զեմք յերկրայս զի իւրաքանչիւր ի սոցանէ տրդարացուսցէ զվստահութիւն մեր և գուն գործեսցէ արդիւնաւոր առնել զպաշտօն իւր ի բարւոք յառաջադիմութեան և յազգաշահ ուղղութեան իմն իսկ պաշտօնական հրատարակութեան ազգիս «Արարատայ», որ իւրովսանն կոչեցեալ է կատարել սրբազան պարտաւորութիւն, ընծայելով ի մէն մի համարի յօդուածս հմտալիցս, ի հրահանգել զժողովուրդն մեր ի բարոյական և յեկեղեցական դիտութիւնս։

Եւ մեք աղօթս առնեմք առ Հոգին Սուրբ Աստուած՝ որ զիտէ զակարութիւնս ամենեցուն զօրաւորս առնել, լցուսցէ զմիտս ամենեցուն շնորհօք և իմաստութեամբ։

Ի 19 դեկտ. 1894
և յազգ. թուականութեան մերում ՌՅԽԴ.

Համար 2168
«Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

Ա Զ Գ.

Աւստրիոյ Պուգովինայի երկիր Սուչաւա քաղաքի մէջը գտնուած Լուսաւորչական Ազգիս Հայոց դաղթականութեան Ազգապետութիւնը և սրբոյ եկեղեցեաց հոգատար անձինքը յայտ առնեն թէ ունին մեծ յոյժ պիտուականութիւն ուշիմ և զուարթ քահանայի մը կամ թէ վարդապետմէն ալ կրնայ ըլլալ միայն թէ ուզածնին այս է, որ նախ Եւրոպական ձևի աշխարհիս ազնուութիւնները ճանչցող մը ըլլայ, դիտնական, պարկեշտ ու տեսօք անձ մը և աստուածաբան. նաև ամենէն առաջ այս, որ Եւրոպայի լեզուի մը տեղեակ, որնոր առաջին կարգի գերմաներէնի համար կը փափագուի. բայց եթէ չէ, նա էն քիչը գոնէ դաղղիերէն գիտցող, որ տեղոյն հանգամանաց և ուղածին համեմատ ներկայացող մը ազգին կարենայ ըլլալու օտար ազգերու դիմաց, որու համար յիշեալ ազգապետութիւն կը առաջարկէ խոստանալով, նախ որոշակի թոշակ մը տարեկան 2000 մինչ 2,400 ֆրանք, այնուհետև բնակարան մը բնակելու համար. և երրորդ՝ բոլոր կելուր յիշուած եկամուտը ըստ մերս Հայաստանեայց ազգիս հին սովորութիւններուն վերաբերեալ. բայց միանգամայն կը խնդրէ որ օր առաջ ըստ ալվեր զրելոց համեմատ գտնուող պատուելի անձը, որ ունի զբարեհաճութիւնն և զհամոզութիւնը ասոր համար, նա առանց ուշ ճեալու բարի կամենայ ազգ առնել այս հասցէով. Warteres Garabet Biller von Prunkul Armen. Cultus Praesidend Sucsava Bucovina Austria միատեղ խրկելով ունեցած վկայականներ նա ցրցընելով թէ ո՞րտեղացի է և թէ ո՞ր դպրոցի աշակերտ է եղեր։

Սուչաւայի Հայոց Ազգային Հոգաբարձութիւնն,

Նախագահ
Ասպետ. Վարդերէս Կարապետի
Գօն Բրունգուլ։